յայտնապէս կ'ըսէ թէ Շահումեան մըն էր ան. «Եւ Մխիթար Աբբայն անդրէն գրեաց գիր և յանձնեաց զՑարութիւնն (երրորդ դէմքով կը խօսի ինք իր մասին) ի Լիվոռնոյ պարոն Զաքարին Շահումեանց». և թէ յաւ ընկերը որուն հետ Վենետիկ պիտի գար՝ էր ինքը Ստեփանոս Շահումեան զօրավարը. «Ի նմին ժամանակի եկեալ էր յաբեւելից պարոն Ստեփանն Շահումեանց, և էր ի տան պարոն Զաքարին (Շահումեանց) և կամէր գնալ ի Վենետիկ. ընդ սմա յուղի անկաւ յետ եօթն աւուրց (անշուտ նամակն առնելէն) և Ցարութիւնն և հասին խաղաղութեամբ ի Վենետիկ (Հոկտ. 16). և զի այս պարոն Ստեփան էր անձն բարի յոյժ և սիրէր մեծապէս զՑարութիւնն, տարաւ զնա ընդ իւր ի տուն իւրեանց ի սանթա Մարիա Ֆորմոզա առ Պարոն Նահապետն Շահումեանց. և ոչ թողացուցեալ զնա գնալ նոյն օրին ի վանս՝ ցուցին առ նա սէր և զգուանս. զի և ծանօթ իսկ էր պարոն Նահապետն հօր Ցարութիւնին[1]». եւն. և կ'աւարտէ խօսքը թէ յաջորդ օրը Ս. Ղազար կը մտնէ Հոկտ. 17ին, և կը դասուի կարգը 12 ընկերներու[2]։ Այսպէս ուրեմն Վենետիկ կը գտնենք 1733ին Ստեփանոս Շահումեանը՝ մէկը Դաւիթ բէկի զօրավարներէն, ճիշտ երեք տարի վերջ այն ճակատագրական օրէն՝ երբ Սիւնեցիներու կամ Ղափանցիներու ներքին պառակտումներով ցիր ու ցան կ'ըլլար Հայ Մակաբեան բանակը, որով և տխուր վերջաւորութեամբ կը մարէր Հայ ազատագրութեան համար վառուած սրբազան կրակը։

Ստեփան ալ անշուշտ շատ մը քաջերու պէս վշտահար յուսաբեկ թողուց սուրն ու հրացանը և արցունքով հեռացաւ այն վայրերէն ուր այնքան հայ արիւն թափուած էր և այնքան յոյսեր օրօրուած, և եկած հոս՝ Վենետիկ երբեմնի քաջ զօրականը այժմ կ'ապրէր վաճառականի գործով իր արենակիցներուն հետ՝ Շահումեան ընտանեաց գիրկը։

Շահումեան ընտանեաց մտերիմ բարեկամութիւնը Մխիթարեան Միաբանութեանս հետ — ինչպէս տեսանք Մխիթար Աբբահօր և Հ. Ց. Թովմաճանի վկայութիւններէն — բնականօրէն առիթ տուաւ որ Ստեփան իբրեւ ականատես վկայ և աջակից զօրավար՝ պատմէր մանրամասն Դաւիթ բէկի պատերազմները մեր Վարդապետներուն, որոնք իմաստուն գտնուեցան գրի առնելու և ապագայ Հայ սերունդին կտակելու պատմական դրուագներ, ուր եթէ կան շատ դասեր և օրինակներ մեր ցեղի անօրինակ քաջութեան և դիւցազնութեան, միանգամայն կայ ողբալի կէտ մը, այն է մեր անմիաբանութիւնը որ կը ջնջէ քաջութեան և զոհողութեան ամէն պտուղ, որ սեւ կը ներկէ մեր ճակատագիրը։

Ահա այսպէս է որ ծագած են Վանքիս ձեռագրատունը գտնուող Ա. գ, 620 թիւը կրող երկու գրչագիրներ, մին մանր նոտրագիր, 33 էջ, որուն վրայ դրուած է պիտակ մը շեղագիր՝ հետեւեալ խօսքերով. «Պատմութիւն խափանցոց ի գրուածոց Հ. Ղուկասու սերաս.». ասիկա համառօտ է և անտարակոյս հնագոյն քան միւսը՝ որու մասին դեռ պիտի խօսինք։

Հ. Ղ. Ալիշան «Սիսական»ի[3] մէջ յետ ակնարկելու Շահումեանի ներկայութիւնը Վենետկոյ մէջ 1736–7 թուականներուն, կ'աւելցնէ. «Արդ յայսմ ժամանակի թելադրեալ է Ստեփանոս և տուեալ յերիւրել միոյ ի Հարց աշակերտաց Մխիթարայ, այն է Հ. Ղուկաս Ստեփանեան Սեբաստացի (վիճ. 1752 Սեպտ.) զՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՐՏԻՑ ՂԱՓԱՆԵՑԻՈՑ» և այս հաստատութիւնը իր կողմէ իբրեւ յայտնութիւն կը համարի անծանօթ անուան մը

1. Ինքնակենսագրութիւն Հ. Յովհաննէս Թովմաճանի. էջ 15–17.

2. Որոնց երկրորդն էր կ'ըսէ «Ստեփան Մելքոնեան Կոստանդինուպոլսեցի, որ է այժմ Աբբայ հայր և արժանաժառանգ յաջորդ անմիջական Մխիթարայ վեհ բարունապետի. զոր Տէր հաստատ պահեսցէ և շնորհեսցէ մեզ ընդ երկայն աւուրս (Ինքնակենս. անդ, էջ 17).

3. Տե՛ս «Մեղրաժոր» գլուխը, էջ 300–301.